որ 48,000 բնակիչ ունի, կղզիացեալ բլրան մը վրայ շինուած է, և այնպիսի աւերակ և լքեալ վիճակի մէջ է՝ որ յատուկ է այս սահմաններուս ամեն քաղաքներուն ։ Սակայն կան գեղեցիկ մզկիթներ, բամպակի, կտաւի և ոսկերչի գործատուններ ։ Ուռհա՝ ըստ կարծեաց իրեն բնակչաց տաճկաց, քրիստոնէից և հրէից՝ ամենահին քաղաքներէն մէկն է. Աբրահամու ծննդեան քաղաքն կը համարուի, և շատ յարգելի եղած մզկիթ մը կը նշանակէ այն տեղն ուր ծնաւ ընտրեալն Աստուծոյ ։

Երկու աղբերաց ականակիտ ջրերն ամեն տեսակ ձուկ կը պարունակեն՝ մանաւանդ ծածան (carpe) որոնց համար կը կարծեն մահմետականք թէ նախահօրն Աբրահամու հետ խորհրդաւոր վերաբերութիւն մ'ունենան. այս ձկներս այնպէս ընտանի են՝ որ խմբովին վտակին ափունքը քալող անձանց ետևէն կ'ընթանան ։

Ուռհային եզական բաներէն մէկն ալ է լերանց մէջ փորուած գերեզմաններն. որոնցմէ հարիւրաւոր կան ։ Այս դամբաններս շատ աղէկ պահուած են, և զանազան մեծութեամբ. մէկ անձէ մը սկսեալ մինչև ամբողջ ընտանեաց մը համար ։

Օտարական ճանապարհորդն նորօրինակ սովորութիւն մը կը գտնէ Ուռհայի տղոց մէջ, որոնք ամենքն ալ մեծ օղակներ կը կրեն քթերնէն ։ Այս սովորութիւնս Աբրահամու ժամանակէն ըսկսեալ է, կ'ըսեն ։ Երբ այս անհանգիստ զարդարանքս կը հանեն, տասնուվեց տարուան մօտ, օղակն անցաց մէջ ծակ մը կը թողու որ դժուարաւ ամբողջապէս կը գոցուի ։

Ի ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՓՐԿՉԻՆ

ՆՈՒԱԳ

Օդք հովաչունչ՝ այեր պայծառ և զըւարթ ,
Սիւգ քաղցրաբոյր, երկինք են լուրթ կապուտակ .
Փայլէ արփի յեթերաճեմ գըմբեթարդ ,
Ամպախաղացն հըրճուի փաղփուն պարունակ ։

Շող ափիւռ հեզիկ ճօճէ զեփիւռ ըղձաղարթ ,
Թըռչունք նըւագս երգեն յաւաշ ներդաշնակ ,
Ջինջ տըւընջեան վայելք քաղցունք՝ շուք և զարդ ,
Զոր քան պատմելն՝ զմայլելն է ինձ անուշակ ։

Ահա ամպոց քօղ թափանցանց հոլանի
Հորդել Փըրկչին շաւիղ շըքեղ երկնաչու .
Սլանայ փառօք պըճնեալ ամպովք գեղանի ,

Զուարթունք զիւրև նըւագաւոր օրհներգու .
Լո՛ւր , մարդ , Փըրկչիդ , լո՛ւր սուրբ շըրթանց քաղցրենի .
Ահա շաւիղ , ե՛կ զիմ կըրնի , ե՛կ և դու ։

1879 Մայիս 22.

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ
Աշ. Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի.

digitised by A.R.A.R.@